ԿԱՐԾԻՔ

Անի Ռուբիկի Խաչատրյանի «Անձի հոգեբանական որակների շարժընթացը կառավարչի մասնագիտական զարգացման գործընթացում», թեմայով հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հացման «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ ԺԹ. 00.01. ատենախոսության վերաբերյալ"

Ամեն մի դարաշրջան ունի իր մարտահրավերները: Աշխատանքնային գործունեության զարգացման և կատարելագործման փուլերի ուսումնասիրությունը թույլ է տալիս տեսնել, որ այդ գործընթացում մեծ դեր ունի տվյալ ժամանակաշրջանի սոցիալական, հոգեբանական, արժեքային և այլ բաղադրիչներ:

Ա. Խաչատրյանի ատենախոսության աշխատանքը մեկ կարևոր քայլ է, որը հնարավորություն է ընձեռնում ներկայացնել ժամանակակից հոգեբանության մեջ կառավարիչների մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակները, մասնագիտական զարգացման գործընթացում այդ որակների շարժընթացը:

Հետազոտության կենտրոնում անձն է ու նրա մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների զարգացումը: Առանձնացվել են կառավարչի մասնագիտական կարևոր հոգեբանական որակները, որպես նրա մասնագիտական զարգացումը պայմանավորող անձնային հատկությունների յուրահատուկ համադրություն: Ատենախոսը քաջատեղյակ լինելով հիմնախնդրի ուսումնասիրության տարբեր կողմերին, հիմնվել է հոգեբանության բնագավառում հայրենական, ռուսական և միջազգային տեսությունների գաղափարների վրա / Ա.Բ. Լոքյան, Ռ.Վ. Աղուզումցյան, Հ.Մ. Ավանեսյան, Վ.Շադրիկով, Ե. Կլիմով, Կ. Աբուլխանովա-Սլավսկայա, Յ. Պովարենկով, Յ. Սինյագին, Վ. Շտռոն, Մ. Շեպել, Պ. Դրուկեր և ուրիշներ/, հետազոտական ճանապարհով բացահայտել է կառավարիչների անձնայի որակների զարգացման մի շարք օրնաչափություններ, որոնք կարող են հարստացնել ընդհանուր և կառավարման հոգեբանության մյուս բնագավառների տեսական և գործնական հիմնահարցերի գիտական մեկնաբանման զինանոցը:

Ա. Խաչատրյանի ատենախոսության նյութը հնարավորություն է տալիս գործնական հետազոտության հիման վրա վերանայել հոգոբանական որոշ դրույթներ՝ կապված անձնային որակների, հուզական ինտելեկտի դրսևորման, զարգացման և մարդկայի

գործունեության մեջ նրա դերի նշանակության հետ: Ատենախոսության մեջ բացահայտվում են մասնագիտական պատրաստման գործընթացում կառավարչի մասնագիտական կարևոր անձնային որակների շարժընթացի առանձնահատկությունները, կառավարիչների մասնագիտական կարևոր անձնային որակների հարաբերակցությունները, նրանց անձնային որակների արտահայտվածությունը, ինչպես նաև փորձառու կառավարիչների հուզական ինտելեկտը՝ որպես համակարգաստեղծ հոգեբանական որակ:

Ա. Խաչատրյանի աշխատանքը ամբողջական է: Պահպանված է շարադրանքի ընդհանուր տրամաբանությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, տեսական և հետազոտական գլուխներից, եզրակացություններից, ունի գիտագործնական առաջարկներ, օգտագործված գրականության ցանկ «ընդհանուր 161 աղբյուր, որից 21-ը հայերեն, 84-ը ռուսերեն և 77-ը արտասահմանյան գրականություն» և հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է՝ 143 համակարգչային էջ, ընդգրկում է՝ 12 նկարներ, 9-ը գծապատկեր:

Ներածության մեջ հեղինակը հստակ ներկայացնում է աշխատանքում քննարկվող տեսական վարկածը, ձևակերպում է հետազոտության նպատակը, խնդիրները, հիմնավորում մեթոդները, նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում հեղինակը բազմակողմանի և համակարգված վերլուծել է ժամանակակից կառավարչական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, կառավարչի անձնայի որակները, հարցի հետ առնչվող տեսական հիմանվորումները: Տարբաղադրել է պետական կառավարման համակարգի գործառույթներից բխող անհրաժեշտ հոգեբանական որակները, որոնք ապահովում են կառավարչական գործունեության արդյունավետությունը: Հեղինակը համատեղ իրականացրել է կառավարչական գործունեության հոգեբանական գործոնների վերլուծությունը, կազմել նրանց փսիխոգրամման և պրոֆեսիոգրամման /Կառավարչի հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները, Կոլեկտիվ մենագրություն, Երևան, 2016, ՀՀ ՊԿԱ, 208 էջ/: Վերլուծությունների հիման վրա կազվմել է մեթոդական փաթեթ, որը նախատեսված է կիրառել կառավարիչների մասնագիտական հոգեբանական ընտրությունն իրականացնելիս:

Ուսումնասիրելով տարբեր հեղինակների կողմից ներկայցվող կառավարիչների մասնագիտական գործունեության համար անձնային կարևոր որակները, հեղինակը մեծ անդրադարձ է կատարում հուզական ինտելեկտի գաղափարներին «Ջ. Մայեր, Պիտեր Սոլովեյ, Դ. Գոուլման, Դ. Կառուզո, Ռ. Աղուզումցյան, Ա.Բ. Լոքյան և այլոք»: Հիմնվելով գրականությունում տարբեր մոտեցումների և նաև հեղինակի կողմից իրականացված հետազոտությունների վրա՝ ատենախոսը գաղափար է առաջ բերում, որ հուզական ինտելեկտի բարձր մակարդակը հանդիսանում է կառավարչի գործունեության արդյունավետության կարևորագույն գործոններից մեկը: Աշխատանքի տեսական վերլուծությունների ամփոփումները խոսում են այն մասին, որ հեղինակը ամբողջովին տիրապետում է քննարկվող նյութի բոլոր մանրամասները և ունի իր ուրույն և ինքնուրույն մոտեցումները, դատողությունները, մեկնաբանությունները:

Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է փորձարարական հետազոտություններին: Հեղինակը օգտագործել է հոգեբանական հետազոտությունների մեծ զինանոցը: Հստակ հիմնավորել է ընտրած մեթոդների և մեթոդիկաների ընտրության սկզբունքները և հանրահայտ թեստային ողջ մարտկոցը, արդյունքների վերլուծությունը իրականացրել է միասնական կապի մեջ, ողջ հետազոտության տարբեր մակարդակներում:

Հետազոտության այս գլուխը հարուստ է աղյուսակներով և նկարներով: Ատենախոսը փորձարարական ճանապարհով ներկայացնում է այն դրույթը, որ կառավարչի մասնագիտական կարևոր հոգեբանական որակների զարգացումը չի իրականացվում մասնագիտական գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ, այլ հանդիսանում է գիտելիքների համակարգի ձևավորմանը հաջորդող ինքնուրույն ուսուցման փուլի խնդիր: Այս երկու փուլերով ուսուցման և կառավարիչների պատրաստման գործընթացի կազմակերպումը կարող է հիմք հանդիսանալ կառավարչի մասնագիտական զարգացման համար:

Տեսական վերլուծությունների և փորձարարական հետազոտությունների արդյունքների հիման վրա ատենախոսը հանգել է հինգ հիմնավորված եզրակացությունների, որոնք կիրառական և գործնական արժեք են ներկայացնում հոգեբանության գիտության զարգացման համար:

Սեղմագիրը և հրատարակված 10 հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմանական բովանդակությունը:

Աշխատանքը բավականաչափ ինքնատիպ է և կարող է ներկայացնել մեծ կիրառական նշանակություն:

Չնայած աշխատանքի բարձր գնահատականի և որակի, այնուամենայնիվ կան որոշ վրիպումներ և բացթողումներ, որոնց հաշվառման դեպքում կարծում ենք, աշխատանքը անհամեմատ կշահեր, մասնավորապես՝

1. Որպես կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների ուսումնասիրություն՝ աշխատանքում անդրադարձ չի արվել կազմակերպչական հմտություններին, որը էապես ավելի կհարստացներ աշխատանքի գործնական արժեքը:
2. Աշխատանքի 2.5 բաժնում «Մասնագիտական ուսուցման գործընթացում կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների շարժընթացի ուսումնասիրության արդյունքների վերկուծություն», 96 էջում հեղինակը մեջբերում է անում Ն. Հոլլի կարծիքը, որ հուզական ինտելեկտը ենթական է կատարելագործման, և որ դրանում է կայանում հուզական ինտելեկտի տարբերությունը մտավոր ինտելեկտից, սակայն միտքը չի շարունակվում և պարզաբանվում:
3. Աշխատանքի 2.1 «Հետազոտության գործիքակազմ, մեթոդներ, կազմակերպման և համակազմի նկարագիր» բաժնում, որպես հետազոտական մեթոդներ կիրառվել են թեստավորումը, հարցարանի և փորձագիտական հարցման մեթոդները, բովանդակային վերլուծության մեթոդը, երկարաժամկետ ուսումնասիրման մեթոդը, սակայն, վերջինիս վերաբերյալ ոչինչ չի ասվում:
4. Աշխատանքի տեսական և փորձարարական բաժինները հարուստ են ուսումնասիրություններով և փորձարարական տվյալներով, սակայն դրանք հստակ չեն ձևակերպված եզրակացություններում: Եզրակացությունները շարադրված են երկար N1, N2, N3 կոնկրետ չեն, տեքստային են, նման են վերլուծությունների:
5. N 5 եզրակացությունը ձևակերպված է անհասկանալի, որի արդյունքում միտքը տուժում է:

Նշված անճշտությունները բոլորովին չեն նսեմացնում գիտական աշխատանքի արժեքը, որը կատարված է գիտական բարձր մակարդակով, ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն: Ատենախոսությունը ունի ինքնուրույն, ավարտուն տեսք, ակնհայտ է, որ այն կարող է մեծ ներդրում ունենալ հոգեբանական ծառայության կազմակերպման աշխատանքներում:

Ընդհանրացնելով վերը նշվածը, կարելի է գալ հետևյալ եզրահանգմանը՝

Եզրակացություն

Անի Ռուբիկի Խաչատրյանի «Անձի հոգեբանական որակների շարժընթացը կառավարչի մասնագիտական զարգացման գործընթացում», թեմայով «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ ԺԹ. 00.01. հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հացման ներկայացված ատենախոսությունը ամբողջությամբ բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ Ա. Խաչատրյանը արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՖԿՍՊԻ –ի Սպորտի մանկավարժության և
հոգեբանության ամբիոնի դոցենտ՝
հոգեբանական գիտությունների թեկնածու **Ա.Գ. Ստեփանյան**

Հաստատում եմ՝ հ.գ.թ., դոցենտ
Ա.Գ. Ստեփանյանի ստորագրությունը
ՀՖԿՍՊԻ –ի գիտական քարտուղար՝ մ"գ"դ", պրոֆեսոր **Ա.Ա. Զատինյան**

«04» «Հունվարի» 2024թ.